ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

գ.Նոր կյանք
հեռ. (0234)-62901

29. 12 . 2017թ.

N 206

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Արարատի մարզի Նոր Կյանք համայնքի ավագանու 26.12.2017 թվականին կայացած նիստի 26-32-Ն որոշումների կրկնօրինակները: Առդիր 20 / քսան / թերթ:

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Ք. Սեդրակյան
Հեռ. (0234)-62901

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2017 թվականի N 26

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Ավագանին որոշում է.
Հաստատել Նոր Կյանք համայնքի ավագանու թիվ 10 նիստի օրակարգը.

1.Նոր Կյանք համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի նախագծի հաստատում:
2.Տարեվերջյան գույքագրման արդյունքների ամփոփում:
3.Նոր Կյանք համայնքում նորատունկ բազմամյա տնկարկների սեփականատերերին հողի հարկի գծով արտոնություններ տրամադրելու մասին:
4.Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, վճարի հաշվարկման և վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:
5.Նոր Կյանք համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 24 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6.Նոր Կյանք համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 23-Ն որոշման 3-րդ հավելվածում լրացում կատարելու մասին:

Ավագանու անդամներ. Կողմ 5 /հինգ/ Դեմ 0 /զրո/ Չեռնպահ 0 /զրո/

1.Աբրահամյան Էմմա
2.Բազյան Դավիթ
3.Բաղդասարյան Աղվան
4.Հովհաննիսյան Արարատ
5.Սարգսյան Սարգիս

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

«26 » դեկտեմբերի 2017թվականի 27-Ն

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ .

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել Նոր կյանք համայնքի 2018թվականի տարեկան բյուջեյի նախագիծը հետևյալ տեսքով.

ա/ Եկամտային մաս	-64427.8 հազար դրամ
բ/ Ծախսային մաս	-64427.8 հազար դրամ

ա/ Եկամտային մասը ըստ եկամտատեսակների բաշխված է հետևյալ չափով.

1. Հարկեր և տուրքեր	-23700,0 հազար դրամ
ն/թ 1/1 Գույքային հարկեր անշարժ գույքից	-13900,0 հազար դրամ
ն/թ գույքահարկ շենքի և շինությունների	-700,0 հազար դրամ
որից ֆիզիկական անձանցից	-700,0 հազար դրամ
Հողի հարկ	-13200,0 հազար դրամ
ն/թ ֆիզիկական անձանցից	-13200,0 հազար դրամ
1/2 Գույքահարկ փոխադրամիջոցներից	-12000,0 հազար դրամ
1/3 Տեղական տուրքեր	-390,0 հազար դրամ
ն/թ շինությունների շինարարության թույլտվության համար	-30,0 հազար դրամ
որից հիմնական շինությունների համար	-30,0 հազար դրամ
շինությունների քանդման թույլտվություն	-10,0 հազար դրամ
Ծխախոտի վաճառքի թույլտվություն	-168,0 հազար դրամ
Խմիչքների իրացման համար	-168,0 հազար դրամ
Արտաքին գովազդի համար	-14,0 հազար դրամ
2/5 Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/	-34543.4 հազար դրամ
Նպատակային հատկացումներ/սուբվենցիա/	-
3/3 Գույքի վարձակալությունից մուտքեր	ընդ. -394,4 հազար դրամ
ն/թ հողի վարձակալություն	-394,4 հազար դրամ
3/4 Բյուջեյի եկամուտներ	ընդ. -200,0 հազար դրամ
Աղբահանության վճար	-200,0 հազար դրամ
3/5 Վարչական գանձումներ	ընդ. -3000,0 հազար դրամ
Ծնողական գումարներ	-3000,0 հազար դրամ

բ/ Ծախսային մասը բաշխվում է հետևյալ չափով.

1. Կառավարման ապարատ	ընդ. -19674,0 հազար դրամ
ն/թ աշխատավարձ /հոդված 4111/	-16104,0 հազար դրամ
էներգետիկ ծառայություն /հոդված 4212/	-200,0 հազար դրամ
կոմունալ ծառայություն /հոդված 4213/	-200,0 հազար դրամ
կապի ծառայություն /հոդված 4214/	-300,0 հազար դրամ
ԱՊՊԱ ծառայություն /հոդված 4215/	-200,0 հազար դրամ
համակարգչային ծառայություն /հոդված 4232/	-200,0 հազար դրամ
տեղեկատվական ծառայություն /հոդված 4234/	-200,0 հազար դրամ
մասնագիտական ծառայություն/հոդված 4241/	-400,0 հազար դրամ
մեքենաների ընթացիկ նորոգում /հոդված 4252/	-300,0 հազար դրամ
գրասենյակային նյութեր /հոդված 4261/	-250,0 հազար դրամ
տրանսպորտային նյութեր /հոդված 4264/	-600,0 հազար դրամ
Կենցաղ. հանր. սննդի նյութեր /հոդված 4267/	-150,0 հազար դրամ
Հատուկ նպատակային նյութեր /հոդված 4269/	-500,0 հազար դրամ
այլ հարկեր /հոդված 4823/	-70,0 հազար դրամ
2. «Նոր կյանքի մանկապարտեզ» ՀՈԱԿ	ընդ.-16000,0 հազար դրամ
ն/թ այլ կապիտալ դրամաշնորհներ /հոդված 4639/	-16000,0 հազար դրամ
3. Մշակույթ, հանգիստ, կրոն	ընդ.-1200,0 հազար դրամ
ն/թ գույքի վարձակալություն/հոդված 4216/	-200,0 հազար դրամ
Այլ ծառայութ. ձեռք բերում/հոդված 4239/	-1000,0 հազար դրամ
4. Հիմնական ընդհանուր կրթություն	ընդ.-200,0 հազար դրամ
ն/թ այլ կապիտալ դրամաշնորհներ /հոդված 4637/	-200,0 հազար դրամ
5. Սոց. անապահով աշակերտ. ավճար ծառ.	ընդ.-1100,0 հազար դրամ
մեքենաների ընթացիկ նորոգում /հոդված 4252/	-300,0 հազար դրամ
տրանսպորտային նյութեր /հոդված 4264/	-800,0 հազար դրամ
6. Առողջապահություն	ընդ.-200,0 հազար դրամ
ն/թ այլ կապիտալ դրամաշնորհներ /հոդված 4637/	-200,0 հազար դրամ
7. Փողոցների լուսավորություն	ընդ. -1950,0 հազար դրամ
ն/թ էներգետիկ ծառայություն/հոդված 4212/	-1000,0 հազար դրամ
ընթացիկ նորոգում /հոդված 4252/	-950,0 հազար դրամ
8. Թափառող կենդանիների վնասազերծում	ընդ.-200,0 հազար դրամ
ն/թ մասնագիտական ծառայություն/հոդված 4241/	-200,0 հազար դրամ
9. Գյուղատնտեսություն	ընդ.-250,0 հազար դրամ
ն/թ հատուկ նպատակային նյութեր/հոդված 4269/	-250,0 հազար դրամ
10. Աղբահանում	ընդ.-4040,0 հազար դրամ
ն/թ կոմունալ ծառայություն /հոդված 4213/	-3840,0 հազար դրամ
տրանսպորտային նյութեր/հոդված 4264/	-200,0 հազար դրամ
11. Սոցնպաստներ	ընդ.-3700,0 հազար դրամ
ն/թ հուղարկավորման ծախսեր/հոդված 4726/	-500,0 հազար դրամ
կրթական մշակույթ և սպորտային նպաստներ/հոդ. 4727/	-500,0 հազար դրամ
այլ նպաստներ/հոդված 4729/	-2700,0 հազար դրամ
12. Հասարակական կազմակերպություններին աջակցություն	ընդ.- 300,0 հազար դրամ
ն/թ նվիրատվ. այլ շահույթ չհետապնդող կազմակերպ. /հոդված 4819/	-300,0 հազար դրամ
13. Մշակույթի տներ, ակումբներ	ընդ.-9090,0 հազար դրամ
ն/թ աշխատավարձ /հոդված 4111/	-7040,0 հազար դրամ
էներգետիկ ծառայություն/հոդված 4212/	-1500,0 հազար դրամ
մասնագիտական ծառայություն/հոդված 4241/	-250,0 հազար դրամ
ընթացիկ նորոգում և պահպանում/հոդված 4251/	-300,0 հազար դրամ
14. Տեղեկատվական ծառայություն	ընդ.-150,0 հազար դրամ
ն/թ հեռուստատեսային ծառայութ./հոդված 4234/	-150,0 հազար դրամ
15. Պահուստային ֆոնդ	ընդ.-6373.8 հազար դրամ
ն/թ պահուստային միջոցներ/հոդված 4891/	- 6373.8 հազար դրամ

Ավագանու անդամներ

կողմ 5/կողմ/ դեմ 0/զերո/ ձեռնպահ 0/զերո/

Ա. Բաղդասարյան
Ա. Հովհաննիսյան
Դ. Բազյան
Է. Աբրահամյան
Ս. Սարգսյան

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք. ՄԵԴՐԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2017 թվականի N 28-Ն

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով՝ Ավագանին որոշում է .

Հաստատել Նոր Կյանք համայնքի տարեվերջյան գույքագրման արդյունքների ամփոփումը:

Ավագանու անդամներ. Կողմ 5 /հինգ/ Դեմ 0 /զրո/ Ձեռնպահ 0 /զրո/

1.Աբրահամյան Էմմա
2.Բազյան Դավիթ
3.Բաղդասարյան Աղվան
4.Հովհաննիսյան Արարատ
5.Սարգսյան Սարգիս

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2017 թվականի N 29

Ղեկավարվելով <<Հողի հարկի մասին >>Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 10-րդ հոդվածի զ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի առաջարկը

Ավագանին որոշում է .

Ազատել հողի հարկից նոր հիմնած և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիների սեփականատերերին մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը՝ ըստ հավելվածի:

	Սեփականատիրոջ Անուն Ազգանունը	Հողամասի ծածկագիրը	Հողատեսքը	Փոփոխված հողատեսքը	Հողամասի մակերեսը /հա/
1	Յուրիկ Բալումյան	0134-0006	Վարելահող	Խաղող	0.275
2	Գորգիս Ռաֆոյան	0126-0004	Վարելահող	Պտղատու	0.48
3	Արթուր Մարտիրոսյան	0117-0001	Վարելահող	Պտղատու	0.189
4	Գևորգ Մարտիրոսյան	0123-0010 0124-0017	Վարելահող	Պտղատու	0.268
	Ընդամենը՝				1.212

Ավագանու անդամներ Կողմ 5 /հինգ/ Դեմ 0 /զերո/ Չեռնպահ 0 /զերո/

1.Աբրահամյան Էմմա
2.Բազյան Դավիթ
3.Բաղդասարյան Աղվան
4.Հովհաննիսյան Արարատ
5.Սարգսյան Սարգիս

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկեմբերի 2017 թվականի N 30-Ն

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով՝
Ավագանին որոշում է.

Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, վճարի հաշվարկման և վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ

Կողմ 5 /հինգ/ Դեմ 0 /զրո/ Չեռնպահ 0 /զրո/

1. Աբրահամյան Էմմա
2. Բազյա Դավիթ
3. Բաղդասարյան Աղվան
4. Հովհաննիսյան Արարատ
5. Սարգսյան Սարգիս

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Նոր Կյանք համայնքի ավագանու

2017 թվականի դեկտեմբերի 26-ի

N30-Ն որոշման

ԿԱՐԳ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Նոր Կյանք համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում <Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Նոր Կյանք համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում < Աղբահանության և սանիտարական մաքրման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի <ե> կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում << Աղբահանության և սանիտարական մաքրման մասին > > Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Նոր Կյանքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները :

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

7. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,

2) այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի՝ Նոր Կյանք համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:

8. Սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածն որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 20 դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 30.72 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1 քմ – 20 դրամ), վճարը հաշվարկվում է ըստ փաստացի նպատակային նշանակության օգտագործման չափի:

2) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 3 դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 625.0 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1 քմ -3 դրամ):

IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

9. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացվում է Նոր Կյանքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից(այսուհետ՝ գանձող:)

10. Գանձողը ստանում է Նոր Կյանքի կողմից տրամադրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Նոր Կյանքի համայնքապետարանի կողմից լիազորված մարմնի (այսուհետ՝ համակարգող) և գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձման և ընդունման արձանագրություն:

11. Գանձողը, համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:

12. Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ը բանկային կամ փոստային համակարգի միջոցով գումարը փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան: Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, գանձողը պարտավոր է հանձնել համակարգողին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ն:

V. Աղբահանության վճարի հաշվառման և վճարման ժամկետները

13. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

14. աղբահանության վճարի վճարումը սահմանվացծ ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլ դրույթներ

15. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Նոր Կյանք համայնքի ղեկավարի կողմից:

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2017 թվականի N 31-Ն

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Նոր կյանք համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 24 –ի փոխարեն կարդալ 24-Ն և շարադրել նոր խմբագրմամբ..

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության/տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվությյուն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Օ Բ Յ Ե Կ Տ Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Ր

ա/ մինչև 300 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քառ.մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ -15000դրամ,

բ/ սույն կետի ա/ ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 30000 դրամ,

բբ/ 501-ից մինչև 1000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցրող շենքերի և շինությունների համար՝ - 50000 դրամ,

բգ/ 1001-ից մինչև 3000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 50000 դրամ,

բդ/ 3001 և ավելի քառ.մ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 100000 դրամ.

Ո Չ Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Շ Ի Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Տ Ե Ղ Ա Դ Ր Մ Ա Ն Հ Ա Մ Ա Ր

գ/ մինչև 20 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 3000 դրամ,

դ/ 20 և ավելի քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 5000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կցակառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ -3000դրամ,

բ/ բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կցակառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքա-չափերը շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետությանօրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ - 5000 դրամ,

1, 2 և 3 կետերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը:

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար սահմանվում է՝ -200,0 հազ. դրամ,

5.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում , կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացույցային տարվա համար՝ -60,0հազար դրամ,

6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար,

օրացույցային տարվա համար՝ -50,0 հազար դրամ,

7. Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/ մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում -5000դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 12000դրամ,

գ/51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա- կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 14000դրամ,

դ/101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա- կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 22000 դրամ,

ե/201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա -կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 28000դրամ,

զ/501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում -50000 դրամ,

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա/ մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում -5000 դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա- կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 12000դրամ,

գ/51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա- կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 14000դրամ,

դ/101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա- կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 22000 դրամ,

ե/201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնա -կան շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 28000դրամ,

զ/501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում -50000 դրամ,

8. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրա- քանչյուր օրվա համար 1 քառմ-ի համար - 350 դրամ,

9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին/սաունաներին/ ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացույցային տարվա համար՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ -10000,0 դրամ,

բ/հանրային սննդի և զվարճանքի [illegible] համար՝ -30000,0դրամ,
գ/բաղնիքների/սաունաների/ համար՝ -250000,0դրամ,
դ/խաղատների համար՝ -600000,0դրամ,
ե/շահումով խաղերի համար՝ -300000,0դրամ,
զ/վիճակախաղերի համար՝ -110000,0դրամ,

10.Համայնքի վարչական տարածքում հանրաքվեային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է.

ա/ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 3000դրամ,
- 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 6000դրամ,
- 51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 12000 դրամ,
- 101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 16000դրամ,
- 201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 22000դրամ,
- 501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 35000դրամ,

բ/ ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ -1000դրամ,
- 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 1500դրամ,
- 51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ -3000դրամ,
- 101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ -5000 դրամ,
- 201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 10000դրամ,
- 501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 20000 դրամ:

11. Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր ամիս մեկ քառմ-ի համար՝

ա/ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային % / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ -2000,0 դրամ,

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային %/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար -3500,0 դրամ,

12.Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը /զինանշան,անվանում և այլն/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ -100000,0դրամ

13.Համայնքի վարչական տարածքում մարդատար - տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ -10000,0դրամ,

14. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ -500000,0դրամ,

Որոշման 4-րդ կետից մինչև 14-րդ /ներառյալ/ կետերի վրա կիրառել 0,5 գործակից:

15. Համայնքի տարածքում ՝

ա/ շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար փոխհատուցման վճար սահմանել

- -1000,0 դրամ,

բ/ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված, շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների/այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել

-1000,0դրամ,

գ/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել

-1000,0դրամ,

դ/համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու, վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 1000,0 դրամ,

ե/ համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել -1000,0դրամ,

16. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար տեղական տուրքը սահմանել - 1000,0 դրամ.

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1)Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ամսական սահմանել - 5000 դրամ

2)Իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից աղբահանության վճարի

սակագին սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝

ա/ մանկապարտեզ - 2000 դրամ

բ/ միջնակարգ դպրոց - 3000 դրամ

գ/ առևտրի և առողջապահության մատուցվող ծառայություններ - 1000 դրամ

դ/բնակչության սպասարկման և այլ ծառայություններ - 500 դրամ

Ավագանու անդամներ կողմ 5 /հինգ/ դեմ 0 /զերո/ ձեռն.0 /զերո/

1.Աբրահամյան Էմմա
2.Բազյան Դավիթ
3.Բաղդասարյան Աղվան
4.Հովհաննիսյան Արարատ
5.Սարգսյան Սարգիս

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2017 թվականի N 32 -Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ «ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 23 – Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 3-ՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 - րդ հոդվածի պահանջներով՝
Ավագանին որոշում է՝

1/ Սահմանել Նոր կյանք համայնքի ղեկավարի ամսական աշխատավարձը՝250000 /երկու հարյուր հիսուն հազար/դրամ,
2/Հաստատել Նոր կյանքի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձերի չափը, համաձայն N1 հավելվածի.
3/Հաստատել Նոր կյանքի մշակույթի տան աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձերի չափը, համաձայն N2 հավելվածի.
4/ Հաստատել «Նոր կյանքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձերի չափը, համաձայն N3 հավելվածի նոր լրացումով .

Ավագանու անդամներ Կողմ 5 /հինգ/ Դեմ 0 /զրո/ Ձեռնպահ 0 /զրո/

1. Աբրահամյան Էմմա
2. Բազյան Դավիթ
3. Բաղդասարյան Աղվան
4. Հովհաննիսյան Արարատ
5. Սարգսյան Սարգիս

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13 -Ի ԹԻՎ 23/2 ՈՐՈՇՄԱՆ

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 9/ինը/:

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)*
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
2.Համայնքի ղեկավարի տեղակալ	1	*126000*
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
3.Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	*155000*
4.Աշխատակ. գլխավոր մասնագետ /2.3-1/	1	*150000*
5.Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	*120000*
6.Աշխատակ.առաջին կարգի մասնագ. /3.2-1/	1	*116000*
7.Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	*115000*

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
8.Վարորդ	1	*130000*
9.Հավաքարար	1	*80000*

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13 - Ի

ԹԻՎ 23/3 ՈՐՈՇՄԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 8 /ութ/

1.Մշակույթի տան տնօրեն	1	*115000*
2.Գրադարանավար	1	*85000*
3.Մարզիչ	1	*80000*
4.Հնոցապան	1	*80000*
5. Հնոցապան	1	*80000*
6.Հավաքարար	1	*80000*
7.Պահակ	1	*80000*
8. Այգեպան	1	*80000*

ՀԱՎԵԼՎԱԾ N3
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13 - Ի

ԹԻՎ 23/4 ՈՐՈՇՄԱՆ
« ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
Աշխատակիցների թվաքանակը՝ «13» /տասներեք/

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)*
1. Տնօրեն	1	130000
2.Դաստիարակ	1	80000
3.Դաստիարակ	1	80000
4. .Դաստիարակ	1	80000
5. .Դաստիարակ	1	80000
6.Դաստիարակի օգնական	1	80000
7.Դաստիարակի օգնական	1	80000
8.Խոհարար	1	80000
9.Հաշվապահ	0.5	80000
10.Երաժշտութ. դասատու	0.5	80000
11.Բուժքույր	0.5	80000
12.Տնտեսվար	0.5	80000
13.Խոհարարի օգնական	1	80000